ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԳԵՐԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Ֆիզիկական գերլարվածությունը մարմնի օրգանների և համակարգերի ֆունկցիաների խանգարումն է, որը տեղի է ունենում ավելորդ ֆիզիկական ծանրաբեռնվածության ժամանակ:

Ֆիզիկական գերլարվածությունը առավել հաճախ հանդիպում է ծանր հետևակային զենքի հաշվարկների մարտիկների մոտ, ովքեր ստիպված են զգալի հեռավորությունների վրա տեղափոխել զենքի ծանր նմուշները, ինչպես նաև դրանց հաստիքային զինամթերքը:

Կանխարգելում

- Կրովի բեռի բաշխում (նռնականետի արկեր, գնդացիրների պահոստատուփեր և այլն) ստորաբաժանման բոլոր մարտիկների միջև: Ցանկալի չէ դրանք թողնել միայն հաշվարկի վրա: Գրոհից առաջ մարտիկները կազատվեն դրանցից, և խմբային զենքի հաշվարկը կկարողանա դրանցով աշխատել:
- Շոգ եղանակային պայմաններում, գրոհից առաջ, հագուստը և գլխարկները ցանկալի ջրով թրջել: Գրոհի ժամանակ, որպես կանոն, ջրի այդպիսի շռայլությունը անհնարին է:
- Մշտապես կրել խմելու ջրի առնվազն նվազագույն պաշար: Դրա բացակայության դեպքում պաթոլոգիան ավելի արագ է զարգանում և ավելի դժվար է ընթանում :

Բուժում

- Ներմկանային ցավազրկողի ներարկում:
- Սպազմոլիտիկների ներմկանային ներարկում (հնարավոր է լրացուցիչ պերեորալ ընդունում):
- Հագուստի և գլխարկի թրջում:
- Վերջույթների բարձր դիրք, իսկ ծանր վիճակների դեպքում, տեղային ցավազրկողների և հակաբորբոքային քսուքների կիրառմամբ (դիկլոֆենակ և այլն), սրունքների և ոտքերի մերսում:

Հազվագյուտ դեպքերում կարող է զարգանալ այնպիսի պաթոլոգիա, ինչպիսին է կմախքի մկանների սուր նեկրոզ (ռաբդոմիոլիզ)՝ հազվագյուտ, բայց պոտենցիալ կյանքին սպառնացող վիճակ, որն առաջանում է լայնակի շերտավոր մկանների քայքայումից և կարող է միաժամանակ ազդել տարբեր օրգանային համակարգերի վրա: Ի թիվս այլ բաների, զգալի ժամանակ ֆիզիկական գերլարումը կարող է ծառայել որպես դրա առաջացման պատճառ:

Ռաբդոմիոլիզի հիմնական նշանները

- Մեզը մուգ շագանակագույն, կարմիր, Կոկա-կոլայի կամ թեյի գույնի է (ցույց է տալիս մեզի մեջ միոգլոբինի առկայությունը (միոգլոբինուրիա),
- արյան առկայությունը ցուցիչի շերտի վրա, բայց մեզի մեջ դրա բացակայությունը ցույց է տալիս միոգլոբինուրիա (որոշ ցուցիչի շերտեր ունեն միոգլոբինի թեստ),
- մկանների թուլություն, վատ ինքնազգացողություն, հոգնածություն, ընդհանուր թուլություն,
- մկանների և հոդերի ցավ,
- ջերմություն,
- տախիկարդիա,
- ցավ որովայնի շրջանում,
- սրտխառնոց, փսխում,
- էպիլեպսիայի նոպաներ, էնցեֆալոպաթիա:

Բարեբախտաբար, ինչպես արդեն նշել ենք, ռաբդոմիոլիզը հազվադեպ հանդիպող պաթոլոգիա է: Ընդհակառակը, ֆիզիկական գերլարվածության և վերը նշված գործոնների ազդեցության հետևանքով «գրոհային գերլարվածության» ընդհանուր սինդրոմը առավել հաճախ է հանդիպում: Այն դրսևորվում է ուշաթափությամբ, մարտիկների գիտակցության կորստով, ջղաձգումով, հատկապես ստորին վերջույթներում, մկանների սպազմի պատճառով շնչառության դժվարությամբ անգամ շնչահեղձությամբ, ուղեկցվում է մահվան վախով: Հատկապես մահվան վախը և ծայրաստիճան ցավոտ սպազմերը այս վիճակի բնութագրական առանձնահատկությունն են: Դրանք կապված են մարդու բոլոր ուժերի իսկապես ծայրահեղ գերլարվածության հետ, բայց շրջապատը դա կարող է մեկնաբանվել որպես սիմուլյացիա:

Աղբյուրը. https://vk.com/unfair_advantage?ysclid=m8yrqlq8oe97656368